



Կ'երագեմ, կը խաղամ, կը ստեղծեմ

Կեանքիս ամենէն

աղօլոր օրը



..... ին տետրակը



Այս տետրակը պատրաստուած է «Կեանքիս ամենէն աղուոր օրը» գիրքին համար իբրեւ վարժութիւններու օժանդակ աղբիւր:

Գիրքի հրատարակութիւն՝ Արաս Հրատարակչատուն, 2023

Վարժութիւններ՝ Թինա Քոբան
Խմբագրութիւն՝ Սարին Ագապաշ

Շնորհակալութիւն Մարալ Ութային՝
իր տուած գաղափարներուն համար:

Պատրաստուած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ
հովանաւորուած «Փիլիպարտէզ» ծրագիրի միջոցով:



Փիլիպարտէզ
2023

Այսօր կեանքիս ամենէն աղուոր օրն է, քանի որ...

Կեանքիդ ամենէն աղուոր օրը ինչէր պատահած էին:

.....

.....

.....

.....

.....

.....



Երբ օր մը աղուոր է,
ինչպէս կը զգաս:

.....

.....

.....

.....

.....

.....

Երբ օր մը աղուոր չէ,
ինչպէս կը զգաս:

.....

.....

.....

.....

.....

.....

Գիրքին ամենէն աղուոր օրերը

Գիրքին մէջ զանազան աղուոր օրերու մասին կարդացինք: Ասոնցմէ որո՞նք քեզի համար ալ աղուոր օրեր էին: Ինչո՞ւ այդպէս զգացիր:

.....

.....

.....

.....



.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Պարզ օրեր եւ աղուր օրեր


Եթէ քեզի համար պարզ օր
մըն է, ինչէր կը պատահին այդ
օրուան ընթացքին:

Եթէ քեզի համար աղուր օր
մըն է, ինչէր կը պատահին այդ
օրուան ընթացքին:


Կը պատահի՞, որ պարզ օր
մը աղուր բան մը ընես:

Կը պատահի՞, որ աղուր
օր մը պարզ բան մը ընես:

Ներկենք այս աղուր տեսարանը:




Պաղպաղակը ներկենք մեր սիրած տեսակներուն գույներով:



Ասանկ աղուոր օր կ'ըլլամ

Գիրքին կերպարը օր մը հեծելանիւն կ'իյնայ, օր մը կրկնեփները կ'այրէ, ուրիշ օր մըն ալ ընկերոջը հետ կը գժտուի, բայց բոլոր այս օրերը աղուոր օրեր կ'ըլլան իրեն համար: Եթէ այս դէպքերէն մէկը ապրէիր, քեզի համար ալ աղուոր օր մը պիտի ըլլամ:



.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....


«Աղուոր օր» անունով կարկանդակը

- * Ծաղիկի մը անուշ բոյրէն երկու շունչ
- * Անձրեւին տակ քիչ մը պար
- * Երեք գնդիկ լեմոնի պաղպաղակ
- * Ուրիշներուն նուիրուած պզտիկ ժպիտներ
- * Պտղունց մը փաթթուկ ծառին
- * Երկար պոչով թռուցիկ մը
- * Մեծ հայրիկին հետ փունջ մը խնդուք
- * Քանի մը հատ բամպակի պէս ամպ
- * Կատուի մը հետ կարճուկ զրոյց մը
- * Պատուհանին եզերքը անձայն ժամեր

Գիրքին կերպարը
այս բաղադրիչները
գործածելով «աղուոր օր»
անունով կարկանդակ մը
պատրաստեց:



Դուն ո՞ր
բաղադրիչներով
կը պատրաստէիր
քու աղուոր օրուան
կարկանդակդ:



Ո՛ր պահուըտած են այս բառերը:

աղուոր	կատակ	դրացի
բոյր	փաթթուկ	կատու
կաթկթիլ	անձրեւ	ամպ
պաղպաղակ	կրկնեփ	չամիչ

ր	հ	ե	յ	ւ	բ	ա	չ	ա	մ	ի	չ
օ	բ	ֆ	կ	մ	է	խ	վ	ջ	թ	գ	կ
լ	զ	պ	ա	ղ	պ	ա	ղ	ա	կ	լ	ճ
լ	փ	ա	թ	թ	ո	ւ	կ	ե	ա	զ	խ
ա	ի	մ	կ	տ	ճ	ց	կ	ա	տ	ա	կ
ղ	ձ	պ	թ	օ	ռ	ա	ժ	փ	ո	մ	ր
ո	մ	ֆ	ի	յ	հ	ն	ճ	ի	ւ	հ	կ
ւ	զ	ր	լ	ի	ս	ձ	խ	հ	ը	ճ	ն
ո	է	ց	ւ	ք	դ	ր	ա	ց	ի	ք	ե
ր	կ	գ	է	ը	բ	ե	վ	է	չ	ֆ	փ
խ	բ	ո	յ	ր	դ	ւ	լ	զ	օ	տ	լ
ա	ֆ	կ	հ	զ	պ	փ	ք	ս	մ	ե	ջ

Թռչուն, կատու, շուն



Մէկը ընտրենք եւ երեւակայենք: Անոր աղուոր օրը ինչպէ՛ս պիտի
անցնէր: Կերպարին անուն մը տանք եւ անոր աղուոր օրը պատմենք:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Նկարները բառերուն միացնենք:

ծիածան



խեցի



զատկանճի



թէյնիկ



բոյն



հովանոց



թռուցիկ




սառնարան




Որմազդ մը պատրաստենք

Քուլաժ մը պատրաստելով «Աղուոր օր» վերնագիրով որմազդ մը ստեղծենք: Կրնանք գունաւոր թուղթեր, օրաթերթերէն եւ ամսաթերթերէն նկարներ կամ գրութիւններ գտնել եւ զանոնք գործածել: Նաեւ կրնանք տեսակ տեսակ կերպասներու կտորներ գործածել կամ գոյնզգոյն տերեւներ, ճիւղեր գտնել: Մեր ամենէն սիրած ներկերով ալ կրնանք ճոխացնել քուլաժը: Կարի ցանկէն ալ նիւթեր կրնանք ընտրել, բայց որոշումը մերն է: Ի վերջոյ մեր աղուոր օրուան որմազդը կը պատրաստենք: Մեր ուզածին պէս պատրաստենք եւ մեր ուզած տեղը կախենք:



Գոյնգոյն կլորակներ

Երբ «աղուոր օր մը» ըսենք, մեր միտքը ո՞ր գոյները կու գան:
Այս գոյներով ներկենք վարի կլորակները: Եթէ ուզենք, կրնանք
կլորակները շատցնել: Իսկ ինչո՞ւ այս գոյները եկան մեր միտքը,
ինչո՞ւ աղուոր օրուան մը հետ կապ ունին այս գոյները:



.....

.....

.....

.....

Նուէրի աշխատանոց

Եկէ՛ք այսօրը աղուոր օրուան մը վերածենք: Տունին շուրջէն,
դպրոցէն, պարտէզէն կամ մօտիկ խաղավայրէն քարեր, տերեւներ,
կոներ կամ զանազան ուրիշ բաներ հաւաքենք եւ ամենէն անուշիկը
ընտրելով մեր սիրած անձերուն նուիրենք: Կրնանք քարը ներկել,
տերեւներով քուլաժ մը պատրաստել, պզտիկ բան մը գրել կամ
առանց բան մը ընելու՝ եղածին պէս նուիրել:

Կրկնեփի խոհագիր

Միասնաբար խենթանալիք աղուոր համ ու հոտ ունեցող կրկնեփներ եփե՛նք: Լաւ կ'ըլլայ, եթէ չափահասի մը հետ միասին պատրաստենք:

Բաղադրիչներ՝



85 կր. կարագ
100 կր. շաքար
1 հաւկիթ
300 կր. ալիւր
5 կր. փխրեցուցիչ
կէս թէյի դգալ կասիա
50 կր. չամիչ
50 կր. ընկոյզ

Պատրաստութիւն՝



Նախ սենեակի տաքութեամբ կարագը շաքարին հետ լաւ մը հարենք: Յետոյ հաւկիթն ալ աւելցնելով խառնենք: Ալիւրը, փխրեցուցիչը եւ կասիան աւելցնելով նորէն խառնելէ ետք, չամիչը եւ մանրած ընկոյզը դնենք: Ահաւասիկ պատրաստ է կրկնեփին խմորը:

Խմորը 10-15 վայրկեան սառնարանին մէջ պիտի հանգստանայ: Յետոյ խմորէն ընկոյզի չափ կտորներ առնելով կլորենք ու փուռի ափսէին վրան շարենք: Մօտաւորապէս 20 հատ գնդիկ պիտի ունենանք: Նախապէս 180 ս. աստիճան տաքցած փուռին մէջ 20-25 վայրկեան, մինչեւ որ կրկնեփներուն վրան լաւ մը կարմրին, եփենք:

Կրկնեփը պատրաստելու ընթացքին կրնանք զրուցել մեզի օգնող անձին հետ: Զրոյցի տարուելով, եթէ յանկարծ չայրենք կրկնեփները, բարի ախորժակ:



Փիլիպարտեզի նիւթերէն



Գիրքին կերպարը պարտեզի կատուին «քեզ կը սիրեմ» կ'ըսէ եւ կատուին «միաու» պատասխանին վրայ ուրախանալով, օրուան մասին կը պատմէ: Հոսկէ մեկնելով եթէ ուզէք քննարկում մը ընել սիրոյ մասին, կրնաք «Քեզ շատ կը սիրեմ» նիւթը աչքէ անցընել:



Գիրքին կերպարը ծովափէն գտած խեցիները կը նուիրէ իր սիրած անձերուն: Հոսկէ մեկնելով եթէ ուզէք սեփականատիրութեան հարցը քննարկել, կրնաք «Այս քարը որո՞ւնն է» նիւթը աչքէ անցընել:



Գիրքին կերպարը օր մը իր մտերիմ ընկերոջը հետ կը գտնուի եւ յետոյ ներողութիւն կը խնդրէ: Հոսկէ մեկնելով եթէ ուզէք ընկերութեան մասին քննարկում մը ընել, կրնաք «Ընկերս կ'ըլլամ» նիւթը աչքէ անցընել:

